Պարույր Սևակ

Անհաշտ մտերմություն

3

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ «ԿԱՊՈՒՅՏ ՁԻՈՒ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

I

Վաչեն, Միկիչի անդրանիկ որդին,
Երբ քիչ էր մնում ուսումն ավարտի,
Իմացավ՝ գյուղում շինել են ուզում
Ակումբի նոր շենք, և դրա համար
Նրա դարձին է Թորգոմն սպասում:
Ու երբ ավարտվեց՝ դիպլոմն ստացավ,
Նա իր շրջանի ինժեներ դարձավ:
Նոր շքեղ ակումբ հայրենի գյուղում…
Այն թանկ, սիրելի ու ծանոթ հողում,
Ուր մանկությունն է անցկացրել նրա,
Ուր խաղացել է նա պահմըտոցի,
Եվ ուր քարաշեն դպրոցից բացի
Քարաշեն ուրիշ ոչ մի տուն չկար,-
Նրա աչքի դեմ մի գեղանկար
Պատկեր էր փռվում:

Արյունն էր եռում
Երիտասարդի երակների մեջ
Ու մղում նրան խիզախումների
Որ ձուլվում էին գեղեցիկ ու պարզ
Նախագծերում կառուցումների…
Մարմին է առնում ակումբը արդեն:
Նա բարձրանում է հենց իրենց տան դեմ,
Այն գյուղամիջյան բլուրի վրա,
Որ մանկությունից ծանոթ է նրան:
Ինչքա՜ն է այնտեղ խաղացել Վաչեն:
Քսան տարի է եկել ու անցել,
Բայց նա հիշում է այնքան պարզ հիմա,
Կարծես թե երեկ, հենց երեկ լիներ…

Ահա այստեղ՝ այս բլուրի լանջի վրա
Խաղում էին նրանք այնժամ «կարմիր-բուրժույ»:
Ամեն մեկը աշխատում էր «կարմիր» լինել,
«Բուրժույ» լինել ոչ մի տղա չէր հանդուրժում:
Եվ վերջապես, հենց այդ օրը նրանց համար
Գտնվել էր մի լավ հնար, և ի՜նչ հնար.
Ով որ դասը պատմում է վարժ,
Ով որ ճիշտ է խնդիր լուծում,
Ով ճարպիկ է, արագաշարժ,
Նա կարմիր է՝ առանց վեճի,
Ով որ չար է, փնթի ու ծույլ,
Նա «բուրժույ» է:
Ա՜յ լավ վճիռ:
Երկրորդ օրն էր՝ արդեն նրանք առանց վեճի
Խաղում էին, ինքն էլ շարքում «կարմիրների»:
Խաղում էին:

Հանկարծ վերից
Քրտնակալած և հևալով
Մեջտեղ մտավ թլդիկ Գալոն:
Եվ ձայն տվեց նա կատաղած.
-Է՛յ դու, Կապո՛ւյտ ձիու տղա,
Խաղի միջից շուտ դուրս արի,
Մի՛ կեղտոտի «կարմիրներին»:
-Ո՞վ է Կապույտ ձիու տղան:
Եվ տղաները հարցական
Լուռ նայում են իրար երես:
-Ո՞վ է, ահա՛, նայե՛ք, հրես,-
Ցույց է տալիս նա Վաչեին:
-Ի՞նչ, բատրակի, չքավորի,
Հարազատի միակ որդո՞ւն,-
Վաչեն գոռում մեծավարի,
Թափ է տալիս փայտը օդում,
Բայց նույն պահին, շնչակտուր,
Տեղ է հասնում նաև Վանին
Եվ Գալոյի խոսքն է պնդում:
Ու Վաչեին այդ օրվանից
Խաղից հանում են, վռնդում…
Հայրը ուներ կապույտ մի ձի
Եվ այդ կապույտ ձիուց բացի
Մի սև արջառ՝ գնված հերու
Եվ մի կապոց ջուլ ու փալաս:
Եվ կոլխոզ էր այդ ձին տարել:
Ի՞նչ էր եղել – ի՞նչ իմանաս-
Մրսե՞լ էր ձին, ջո՞ւր էր առել,-
Վեր էր ընկել
Գոմում սատկել:

Եվ Միկիչն էլ իմանալով,
Առաջին պահ խիստ վրդովված
Ձիու համար սաստիկ ցաված,
Գնացել էր, գոռգոռացել
Եվ խոսքի մեջ սպառնացել,
Թե կոլխոզից դուրս է գալու:
Եվ նրա պես մերկ ու ջլուտ
Բատրակները, որ միասին
Հենց նրա հետ նոր կոլխոզի
Հիմքերն էին երեկ դրել,-
Կատակի են տալիս նրան,
Հոհոում են նրա վրա.
-Հենց դո՞ւ էիր միայն պակաս…
-Մի՛ ծիծաղեք, կյա՛նքս վկա,
Էսպես եթե մենք աշխատենք,
Մեր կոլխոզից բան դուրս չի՛ գա,-
Դեռ վրդովված,
Սիրտը ցաված
Մկրտիչն է վրա բերել,-
Էդպես լինի՝ կյանքս վկա,
Դուրս եմ գալիս ես կոլխոզից:
-Ա՛յ մարդ, արի անկեղծ խոսիր,-
Շարունակել են կատակել
Ընկերները: - Ասա՛ անկեղծ,
Չլինի՞ թե երազիդ մեջ
Կուլակներն են փսփսացել:
Մկրտիչն է խիստ բարկացել:
-Հիմար-հիմար դուրս մի՛ տվեք,
Կյա՛նքս վկա, թե չէ, տղերք…
-Թե չէ իսկույն դո՞ւրս եմ գալիս:

-Դուրս եմ գալու, բա ի՞նչ, հիմա՛ր,
Ծաղրի բա՞ն եմ ես ձեզ համար:
-Էլ ինչո՞ւ ես զուր սպասում,-
Ընկերներն են ծաղրով ասում:
Հայտնի համառ, ինքնասածի՝
Նա այլևս ետ չի դառնում
Վայրենական իր ասածից,
Եվ որպեսզի, բոլոր նրանց
Ծաղրում էին ովքեր նրան
Բարկացընի, - ինքնասածին
Բղավում է.
-Տվե՛ք իմ ձին,
Սատկել-մատկելն իմ գործը չի,
Տվե՛ք իմ ձին, դո՛ւրս եմ գալիս:
Այդ թվում է ծիծաղելի,
Եվ ծիծաղում են բոլորը՝
-Որ ասում ես՝ կտանք էլի,
Բայց լոկ կաշին ու ոսկորը…
Բարկանում է նա ավելի,
Շուռ է գալիս ու տուն դառնում
Եվ համաձայն իր ասածին
Կոլխոզ էլ չի վերադառնում:
Այդ օրվանից հենց «Կապույտ ձին»
Մականուն է նրան դառնում…

II

Եվ հիշում է Վաչեն կրկին.
Հայրը օրվա աշխատանքից
Ետ էր դառնում իրիկվա դեմ՝

Հին շապիկը խոնավացած տաք քրտինքից,
Ջարդված այնպես ու հոգնադեմ:
Նստում էր նա բակումմ դրված սալաքարին,
Որ արձակի իր տրեխները կարկատած:
Նստում էր նա շեմին իր տան
Իբրև մարմին առած կարիք,
Իբրև բախտի դաժան կատակ:
Ջուր էր ուզում, խմում, սրբում բերանը թաց
Իր քաթանե հին շապիկի կեղտոտ թևքով,
Եվ հանելով տրեխները մի խուլ հևքով,
Վեր էր կենում ծույլ ու դանդաղ:
Վեր էր կենում ու լվացվում
Այնպես անփույթ և ակամա,
Կարծես զոռով ինչ-որ ծանր պարտք հատուցում
Եվ ոչ մի կերպ չի հասկանում՝ ինչի համար:
Հետո նորից նստում էր նա սալաքարին
Եվ քարի պես համրանում էր, անշարժանում
Մինչև կինը բացեր սեղան:
Եվ այդ պահին
Փոքրիկ Վաչեն՝ մի դեռևս անգետ մանուկ,
Հոր մթագնած կերպարանքից խիստ սրտնեղած,
Հազիվհազ էլ լացը զսպում և ցանկանում
Ցնցել հորը, որ արթնանա,
Կամ բեղերից քաշել նրա,
Որոնք իբրև փակագծեր
Պահում էին ինչ-որ խնդիր,
Որ ոչ մի կերպ փոքրիկ որդին
Չանում, բայց չէր կարողանում
Ո՛չ բաց անել և ո՛չ լուծել…
Իսկ մինչև այդ՝ մայրը ներսում

Կեղտակորույս սուփրան գցում,
Դրսից նրանց ներս էր կանչում:
Թանապուրը սուփրի վրա
Թվում էր մի տաքուկ երազ,
Որ գոլորշու հետ միասին
Կարծես ինչ-որ հույս էր ցրում,
Ինչ-որ պատրանք՝ երազավետ
Եվ ապահով կյանքի մասին:
Մինչդեռ կողքից եփած մսի
Սուր բուրմունքն էր օդը բռնում:
Դա կոլխոզնիկ հարևանն էր
Աշխատանքից վերադառնում…
Օրըստօրե պարզ էր դառնում,
Որ Միկիչը շատ է զղջում
Համառության, իր արածի,
Իր գործածի համար: Սակայն
Ծնված համառ և անզիջում,
Հայտնի իբրև ինքնասածի,-
Խոսք չէր անում վերադարձի:
Նույնիսկ Թորգոմն անցյալ անգամ
Խոսք էր գցել.
-Հը՞, Կապույտ ձի,
Չձանձրացա՞ր մենակ ման գալ:
-Շատ և շատ եմ շնորհակալ,-
Մկրտիչն էր ասել զոռով
Եվ շուռ եկել դեպի իր տուն՝
Երեխայի նման խռով…
Վերհիշում է Վաչեն կրկին.
Բարձր ձայնով, եռանդագին
Դաս էր սերտում տաք քուրսու տակ:

Հայրը՝ օրվա թերթը ձեռքին
Շուռ էր տալիս աննպատակ:
Դաս էր սերտում.
-Եվ կոմունան
Չդիմացավ, ընկավ շուտով,
Որովհետև…
Հայրը փութով
Ընդհատում է.
-Էդ թող մնա,
Հալա դու մի առ է՛ս կարդա,
Տեսնենք ի՛նչ կա լրագրում,-
Եվ հայացքը սուր ու անթարթ
Լրագրին է երկար հառում:
Եվ անսովոր այդ շրիֆտին՝
Կակազում է փոքրիկ որդին
Ու հեգում է՝ «Գըլ-խա-պը-տույտ
Հա-ջո-ղու-թյուն-նե-րից»:
Կարդում,
Չի հասկանում որդին: Սակայն
Հայրը աչքերն իսկ չի թարթում,
Հասկանում է հայրն անկասկած,
Ու ելնելով տեղից հանկարծ
Մոտ է գալիս հայրը որդուն
Ու քիչ հետո նրան դիմում.
-Վերցրու մի թուղթ, գրիչդ առ:
Վերցրի՞ր արդեն: Գրիր.
«Դիմում.
Սույնով գալիս եմ հայտնելու,
Որ ես հերու
Դուրս եմ եկել կոլեկտիվից»:

Գրիր պրծա՞ր: Հիմա գրի՛ր.
«Սույնով գալիս եմ ես առ այն,
Որ չեմ կարող ապրել առանց
Կոլեկտիվի»…
Պրծա՞ր: Գրի՛ր.
«Նաև առ այն, որ հավատաք,
Թե այլևս ոչ մի կատակ
Անխելքության ինձ չի մղի,
Չեմ համառի ես անտեղի»:
Մեկ էլ վերից
Կարդա նորից:
Շա՛տ լավ, գրի՛ր.
«Նաև առ այն,
Որ ես ունեմ մի մեծ խնդիր.
Այն խոսքը, որ դարձավ առակ,
Ինձ շինեց խաղք ու խայտառակ,
Իբրև անուն կպավ անձիս,-
Հակա խոսքը՝ այն «Կապույտ ձին»
Էլ չհիշեն և մոռանան:
Դիմող՝
Միկիչ Թորամանյան»:

III

Եվ մոռացվեց այդ «Կապույտ ձին»
Նորից կոլխոզ ընդունեցին
Եվ Թորգոմի առաջարկով՝
Դաստիարակման նպատակով,
Մկրտիչին վստահեցին
Ամբողջ ֆերման:

-Ուներ մի ձի,
Հիմա ունի յոթանասուն:
Հենց դրանով կհասկանա,
Որ ինքն ունի ոչ թե մի ձի…
-Միանգամայն ճիշտ ես ասում,
Եվ, բացի այդ, -վրա բերեց
Քարտուղարը պարտքշիշի,-
Այն մարդը, որ աղմուկ արեց,
Կռիվ գրեց ու համառեց
Մի նժույգի, ձիու համար,-
Պետք է կարծել, որ շատ հարմար
Վարիչ պիտի դառնա հիմա
Մեր ֆերմայի…
Ու ֆերմայի
Վարիչն է նա մինչև այսօր:
Եվ արդ Վաչեն ակամայից
Վերհիշում է հորն այն պահից
Մինչև հիմա, երբ քիչ առաջ
Ուրիշների և իր առաջ
Նախագահը նրան կոչեց
Այն մոռացված մականունով:
Եվ առաջին անգամ Վաչեն
Հանգիստ ու լուրջ միտք անելով՝
Ինքը իր մեջ խիստ ամաչեց:
Ախր ինչպե՞ս նա չամաչի,
Երբ որ նրա մեղն էլ քիչ չի:
Երիտասարդ հոգին նրա,
Երազներով այնքան լեցուն,
Բորբոքում էր, յուղ էր լցնում
Այն կրակի, հրի վրա,

Որ Թորգոմն էր վառել այստեղ:
Մինչդեռ պետք էր նրան սաստել,
Ինքը Վաչեն ամեն անգամ
Թև էր տալիս նախագահին,
Նշում գալիքն այն մոտակա,
Երբ կյանքը քաղաքային
Պիտի իշխի կոլխոզներում:
-Կոմունիզմի ենք մոտենում:
Գյուղի միջև և քաղաքի
Ամեն տեսակ տարբերություն
Պիտի ջնջվի՛…
Դուր էր գալիս նրան սաստիկ,
Որ աճել են գյուղի մարդիկ:
Ահա թեկուզ բրուտ Ավոն:
Որտեղ նստի ու վեր կենա,
Մեռած բան է բրուտ Ավոն
Միշտ նույն բանից խոսք կբանա.
-Գիտե՞ք, մեզ դեռ ինչն է պակաս.
Տներ չունենք կուլտուրական,
Ասենք՝ ունենք, թե ուրանամ
Զույգ աչքերով թող կուրանամ:
Ունենք և՝ լավ - տաշած քարով,
Կահավորված և լուսավո՛ր:
Բայց կտուրը… էլի հողից,
Պապենական ծածկը նորից:
Իսկ դու ապա գնա, որդի՛,
Էլ չեմ ասում թե Ռուսաստան,
Գնա Լոռի կամ Շամշադին,
Գնա նայիր ամեն մի տան,
Հետո արի նստենք խոսենք:

Էնտեղ, որդի՛, ամոթ ասել,
Նույնիսկ ոտաց ճանապարհին
Դու կտեսնես կարգին «կոիշ»,
Հենց իսկական, քաղաքաձև:
Քո կարծիքով նրանք ուրիշ,
Իսկ մենք ուրիշ կաթ ենք ծծել:
Ինչո՞վ ենք մենք ախր պակաս.
Սովետակա՞ն՝ սովետակա՛ն,
Կոլխո՞զ՝ մենք էլ հո անհատ չենք:
Բա էլ ինչո՞ւ մենք ամաչենք
Ու ետ մնանք մեր դրկիցից,
Ինքներդ ասեք, ախր ինչի՞
Եվ ի՞նչ է պետք, ոսկի՞, թե՞ կավ:
Կա՛վ, որ տափակ բլիթ շինես,
Կրակի մեջ թրծես մի լավ,
Եվ վերջացա՛վ:
Կավն է պակաս,
Իսկ մեր սարում ինչքա՞ն կավ կա,
Էդ հո գիտենք ե՛ս էլ, դո՛ւք էլ,
Էլ ի՞նչ մնաց: Ախպեր, եկեք
Հենց էս տարի, եկող գարնան
Շինենք համեստ մի գործարան
Համ մեզ համար, համ մեր խերին,
Կօգնենք նաև սրան-նրան՝
Մեր հարևան կոլխոզներին…
Եվ խորհում էր հաճախ Վաչեն,
Թե հայրը ետ է մնացել,
Որովհետև հաճախակի
Կշտամբում էր իր զավակին.
-Շա՛տ ես, տղա՛ս, առաջ անցել:

Դա, սիրելիս, այո, գուցե
Նույնիսկ շատ ետ մնալուց էլ
Վնասակար է, վտանգավոր:
-Ճիշտ ես ասում, ախր, քավոր…
Դարբին Գեղամն էր ներս մտնում,
Հետո դիմում նախագահին:
Բայց Թորգոմը շուտ էր գտնում
Պատասխանը.
-Գեղա՛մ ուստա,
Գյուղիդ անունն ապա մի տա՞ս:
-Ձեռ ես առել, ա՛յ հանաքչի:
Առաջ կոչվում էր Չարոխչի,
Իսկ հիմա էլ՝ Սովետաշեն:
-Այ, օրհնըվա՛ծ, այ տնաշե՛ն…
-Լավ, իսկ ի՞նչ է նշանակում,
Ուստա Գեղամ, Սովետաշեն,-
Մեջ էր մտնում նաև Վաչեն:-
Սովետաշե՞ն՝ Սովետաշեն,
Ուրեմն եկեք անենք այնպես,
Որ Չարոխչին հենց իսկապես
Այժմ դառնա Սովետաշեն:
-Է՞, սանիկիս խելքին աշե,-
Ծոր էր տալիս Գեղամ ուստան,-
Եթե միայն տաշած քարով,
Ասֆալտապատ ճանապարհով
Պիտի դառնանք Սովետաշն,
Այն ժամանակ, ա՛յ տնաշեն,
Դու իզուր ես քո գրպանում
Էդ «դիպլոմատը» պինդ պահում
«Դիպլոմատը» վնաս չունի,

Դեռ թող մնա: Մյուս կողմից՝
Բա քո տո՞մսը պարտիական:
Թե էդպես ես դատում, սանի՛կ,
Այն ժամանակ, աստված չանի,
«Դիպլոմատը» ու տոմսը քո,
Պիտի քաշեն հակառակ կողմ…
Եվ առաջին անգամ Վաչեն
Միայն այժմ անդրադարձավ
Ծերուկ դարբնի ասած ոսկի
Կենսափորձից եկած խոսքին:
Նրա մտքով այժմ անցավ,
Որ իսկապես տվյալ դեպքում
Իր պարտտոմսը, ո՛չ, չի՛ ների
Խանդավառված ինժեներին,
Որ սանձազերծ ու խենթ վազքում
Շեղվել է ճիշտ ճանապարհից:
Ճիշտ էր հայրը, ուստան էր ճիշտ,
Ճիշտ էր նաև բրուտ Ավոն:
«Կղմինդրը էր մեզ հարկավոր,
Ձմեռանոց էր անհրաժեշտ:
Կարելի էր անել դա հեշտ:
Շենքի վրա մսխած փողով
Կարելի էր գյուղում շինել
Կղմինդրի չորս գործարան,
Մի յոթ-ութ գոմ պլյուս դրան,
Պլյուս դրան մի տաս տներ,
Պլյուս դրան և մի ակումբ,
Սակայն ոչ թե այն «օպերան»՝
Վեր բարձրացած բլրի վրա»…

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՐՈՏ

I

Իջնում է մութը մեղմորեն,
Լեռան քամին է արթնանում
Եվ սկսում մեղմ օրորել
Դեռ նոր բացված այն մասրենուն,
Որ աճում է այս կողմերում
Ոչ թե փափուկ լավ հողերում,
Այլ ժայռեղեն քարափների
Ու ծերպերի ճղաքներում,
Կարծես առանց արմատների,
Կարծես միայն պինդ սոսնձով
Ժայռի կողքին կպած մի կերպ:
Մագլցում է ձորի միջով
Մառախուղը շղարշակերպ:
Ստվերներն են իջնում ծալ-ծալ
Ու կնճիռներ տալիս սարին,
Եվ պռունգից Գնդասարի
Բարձրանում է լուսինն արծաթ՝
Մառախուղի քողի ներքո:
Այդ պահին է, որ սրնգի
Ոլորուն ու անբառ երգով
Ետ են գալիս արոտներից
Գառ ու նժույգ, կով ու երինջ:
Ցուլի մզզյուն, ձիու խրխինջ,
Ուլի մկկոց, գառան մայուն
Հորթին կանչող կովի բառաչ,
Ճղճղոցը կթվոր կանանց

Տարածվում է ողջ ֆերմայում:
Եվ բազմաձայն այդ համերգում
Կաթնազտիչ զույգ մեքենան
Նույն եղանակն են միշտ երգում՝
Որ ընդհատվում է մերթ ընդ մերթ
Դույլի, թասի զրնգոցից:
Թողած իրենց պահմտոցին՝
Երեխաներն արխաջի մեջ
Ջրույցի են նստում սիրով:
Մեկն ուզում է դառնալ հերոս՝
Ստեփանյան Նելսոնի պես.
Մեկն ուզում է դառնալ վարպետ՝
Ինչպես քեռին, որ քաղաքում
Գործարան է մենակ սարքում:
Մեկը՝ արդեն մի երկրաբան,
Գնդասարն է ուզում քանդել,
Որ իմանա ինչ կա այնտեղ.
Չորրորդը, մի չարաճճի,
Որ չի ուզում նրանց զիջի,
Ետ մնա իր ընկերներից,-
Խոսք է զցում ավտոներից:
Դեռ մեզանից ո՞ւմ հայտնի չի
Պարզությունը նրանց մտքի,
Երբ էլ լինի՝ մեկի խելքին
Հանկարծակի եթե փչի
Ավտոների մասին հիշել,-
Այստեղ արդեն բոլոր նրանք
Մոռանալով, որ մի վայրկյան,
Մի պահ առաջ իրենք վարպետ,
Հերոս էին ու երկրաբան,-

Շոֆեր դառնում անմիջապես
Ու խոսում են, այն էլ ինչպե՞ս:
Այստեղ արդեն ամեն տղա
Գիտակ է և լավատեղյակ
Եվ կարող է խիստ լրջորեն
Ցույց տալ բացերը «Մոսկվիչի»,
«Պոբեդայի» կողմերը լավ,
Եվ ինչն է նոր «ԶԻՍ-երի» մոտ…
Եվ աղմուկը նրանց վեճի
Հնչեր գուցե մինչ առավոտ,
Բայց… պահեստի փոքրիկ բակում
Արան սրինգ է նվագում:
Կանգ են առնում ղեկ ու մոտոր
Եվ իջնելով «ավտոներից»
Երեխաներն արդեն ոտով
Ինքնամոռաց՝ վազ են տալիս
Ու նստոտում գետնին, քարին,
Որտեղ արդեն քույր, մայր ու տատ՝
Մեկի ձեռքին գուլպան կիսատ,
Մյուսներին՝ գիրք, լրագիր,
Ունկնդրում են նվագին:
Գեղգեղում է սրինգն անուշ,
Մեկ դառնում է թույլ ու անուժ,
Մեկ հնչում է ուժգնությամբ
(Բարակ ձայնը դառնում է թավ).
Մերթ ճչում է զվարթորեն
(Պատահել է ասես լավ բան).
Մերթ ընկնում է սարեր-ձորեր
(Կորցրել է ասես ճամփան).
Մերթ լալիս է, մերթ՝ ծիծաղում,

Մերթ՝ աղաչում ու մերթ՝ծաղրում,
Մերթ գնում է հեռու-հեռու,
Մերթ էլ հանկարծ գալիս է մոտ…
Որքա՜ն ցավ կա այս երգերում
Եվ որքան սե՜ր, որքան կարո՜տ…

II

Դեռ նվագում է սրինգը Արան:
Ու սարվորները լսում են նրան:
Հանկարծ հովվական շներն են հաչում
Եվ միանգամից պոկվելով տեղից՝
Սուրում են ձորը: Սրինգն է լռում,
Հավաքվածները ականջը սրում,
Լսում են:
-Մարդ է, գալիս է գյուղից,-
Ասում է Արան ու ելնում տեղից,
Որ գնա զսպի իր գամփռներին:
Մինչ այդ շները իրենք են լռում,
Կլանչ են տալիս ու ետ են դառնում:
Պարզ է՝ ծանոթ է եկվորը նրանց:
Եվ սպասում են: Գալիս է քիչ անց
Երազը՝ ձիով: Շիկնում է Արան,
Բայց մթության մեջ չեն տեսնում մարդիկ
Սիրո շիկնանքը երիտասարդի:

…Դասընկերներ էին նրանք
Եվ միասին էին անցել
Դպրոցական տասը տարին:
Երբ դեռ փոքր էր՝ Արան այնպես

Ամաչկոտ էր: Առանձնապես
Քաշվում էր նա աղջիկներից:
Լուռ, ինքնամփոփ՝
Ժամեր ամբողջ
Նա կերազեր ու կխաղար,
Իսկ երբ մեկը աղմկարար
Աղջիկներից նրան կպչեր,
Նա կշիկներ, կկակազեր՝
Ստիպելով իրեն հազիվ,
Որ չթողնի ու տուն վազի:
Իսկ տղե՛րքը կատակասեր,
Իսկ աղջիկնե՛րն աղմկարար…
Ինչե՛ր ասես որ չի քաշել
Նրանց ձեռքից մեր խեղճ Արան:
«Սուսիկ-փուսիկ» էին կոչում
Ընկերները այնժամ նրան,
Մեկ՝ ձեռք առնում, գալիս կպչում,
Մեկ՝ ծիծաղում նրա վրա,
Մեկ էլ՝ դիմում սրան-նրան…
-Տղե՛րք, ապա նայեք սրան…
-Ոնց որ հիվանդ լինի Արան.
-Քե՛զ, ա՛յ տղա, ի՞նչ է եղել,-
Եվ հարցերի մի ողջ հեղեղ
Ողողում է նորից նրան:
-Նա գունատ է:
-Ընկճված է:
-Գիտե՛ք, ինքըս համոզված եմ՝
Սիրահարված է մեր տղան:
-Իսկ ո՞ւմ վրա:
-Իսկ ում վրա՞:

Ի՞նչ իմանամ, թող ինքն ասի:
-Ասա՛, Արա:
-Տո՛, ձե՛ռք քաշի,-
Շփոթվում է, քրտնում Արան,
Ծաղրողներին քաշմշելով:
-Երազիկն է, ուրիշ էլ ո՞վ:
-Տեսա՞ք սրան:
-Կեցցե Արան…
Եվ հրճվելով իրենց գյուտից,
Իրար բոթում ու կըսմթում,
Գետնից կտրում, օդն են նետում
Կարմրատակած խեղճ Արային,
Որ ամոթից
Ու զայրույթից
Քիչ է մնում իրեն ուտի:
Բանը գուցե վատ վերջանար,
Թե Երազը չըլրջանար.
-Դե, դուք համը շատ մի՛ք հանի,
Չեք թըոցրել հո ձեր խելքը…
Բայց դե ուշ էր. այդ օրվանից
Չարաճճի այդ խոխեքը
Բաց չթողին ոչ մի առիթ,
Որ չխնդան, չուրախանան:
Դե ո՞նց նրանք չուրախանան:
Ամաչկոտ էր որքան Արան,
Ինքնամփոփ ու սուսիկ-փուսիկ,
Երազիկը ընդհակառակ՝
Նախագահի երես առած
Մինուճարն էր չարաճճի՝
Գեղեցկուհին ողջ դպրոցի:

Տղաները դասարանի
(Ամեն մեկը իրեն մտքում,
Ամեն մեկը մյուսից թաքուն)
Սիրահարված էին նրան:
Բացառություն էր լոկ Արան,
Որին նույնպես այդ օրվանից
Մեջտեղ բերին:
Անցավ տարին,
Իսկ պատանու համար տարին
Հո տասներկու ամիս չէ լոկ:
Երեկ՝ մանուկ, արդ՝ պատանի,
Երեկ՝ անգետ, այսօր՝ խելոք.
Անցյալ օրվա զնգոցի տեղ
Մեկ էլ տեսար բասն է թնդում,
Աղվամազե բարակ մի բեղ
Վերին շուրթն է շրջապատում.
Մեկ էլ տեսար արդեն բերնից
Ծխի հոտ է մայրը առնում.
Տեսար՝ հանկարծ պիոներից
Կոմսոմոլ է արդեն դառնում,-
Ու երեկվա սուսիկ-փուսիկ
Եվ ամաչկոտ տղան հաճախ
Դես ու դեն է զցում աչքը…
Թեպետ և մեր խառնվածքը
Անհաստատ չէ այդ աստիճան
Ու դժվար է ելնում հունից,
Բայց ամեն ինչ իր պահն ունի:
Անցավ երկու-երեք տարի,
Եկող տարին իր հետ բերեց
Փոփոխություն զարմանալի:

Հանկարծ մեկից փոխվեց տղան.
Հրմշտոցին ինքն էլ հրեց,
Կատակներից չկարմրեց,
Պատասխանեց հանգի՛ստ, խաղա՛ղ:
Արբունքի էր հասել տղան:
Ի՞նչ կարող էր, թվում է թե
Անմիտ լինել ավելի, քան
Այն կատակը, որ մի անգամ
Ստիպել էր նրան քրտնել:
Ինչպե՞ս եղավ. ի՞նչ պատահեց:
Իսկ ինչպե՞ս է արմատ գցում
Մասրի թուփը ժեռ քարի մեջ:
Հենց այդպես էլ, հավանաբար,
Իրեն համար բացեց ճամփա
Վիրավորանքն այն օրերի:
Եվ ծաղրանքի պաղ քարերի
Ինչ-որ ճեղքում աճեց մի ճյուղ
Եվ աննկատ տվեց ընձյուղ:
Այդ կատակը իզուր չանցավ:
Ինչպե՛ս, ինքն էլ չհասկացավ,
Հետզհետե ահագնացավ
Ու մի օր էլ միանգամից
Նրա համար հստակ դարձավ
Մինչ այդ անհայտ մի զգացում:
Դրսից ոչինչ չէր զգացվում-
Ողջը հին էր, ինչպես որ կար:
Դա չէր կարող տևել երկար,
Եվ շատ շուտով դասարանցիք
Զարմանալով նկատեցին,
Թե ինչպես է Արան՝ Արա՛ն-

«Սուսիկ-փուսիկը» դպրոցի,
Երազիկի կողքին բուսնում,
Ուր նա՝ ինքն էլ այնտեղ հասնում.
Թե ինչպես է հաճախակի
Թաքուն նայում Երազիկին,
Նայում ինչ-որ ուրիշ տեսակ:
-Այ քեզ հրա՛շք, տղե՛րք, տեսա՞ք:
Զվարճալի բան է դառնում:
-Հոնքին էինք նշան բռնում,
Բանից պարզվեց աչքին կպանք…
Եվ մի քաղցր ու ծանր կապանք
Մեր Արայի սիրտն է տանջում:
Երբ որ զանգը վերջին ժամի
Ղողանջում էր ուրախ, հնչում,
Այլայլվում էր, տխրում Արան:
Ծանր էր դառնում նրա համար
Դպրոցից տուն վերադառնալ:
Անբնական անհայտ մեկից,
Անհայտ բանից ինչ-որ դժգոհ՝
Նա խնդրում էր Երազիկից
Մերթ տետրակը ու գիրքը մերթ,
Մեկ՝այս, մեկ՝ այն պատրվակով:
Քաղցր էր այնպես, Երազիկից հեռու պահին
Լինել նրա իրերի հետ, գեթ բաց անել,
Թերթել նրա գիրքը, տետրը, սիրով նայել
Այնտեղ եղած նշումներին:
Եվ Արային այդ պահերին
Միշտ թվում էր, թե ուր որ է
Դասագրքում կամ տետրի մեջ պետք է հիմա
Գտնի նա մի… սիրո նամակ:

Եվ իսկապես նա մի օր էլ
Իր ուզածը գտավ կարծես.
Տետրի վերջին էջի վրա
Արան կարդաց իր աչքերով
Երազիկի աղջկային ձեռագրով
Չորս-հինգ անգամ գրված «Արա»
(Վարժություն էր արել կարծես
Նա «Ա» տառի
Մեծատառի)…
Սիրո նամակ չէր այդ, անշուշտ,
Բայց պարզ, այդ պարզ գրության մեջ
Արան կարծես լսեց ինչ-որ քաղցր շշուկ.
Խայտաց արյունը սրտի մեջ,
Եվ որոշեց իր Երազին
Վաղը ևեթ խոստովանել
Իր տանջանքի, սիրո մասին:
Մյուս օրը…
Ոչ թե սիրո
Հրաժեշտի պարզ խոսքերով
Նա հանդիպեց Երազիկին:
Մի գիշերում հանկարծակի
Պատերազմը իրար խառնեց
Ինչ որ բարձր էր ու թանկագին:
Ինչպես բախտը հայրենիքի,
Այնպես էլ սեր ու երազանք,
Մտադրված խոստովանանք
Ենթարկվեցին խուլ վտանգի:
Արան նույն օր մեկնեց բանակ…
…Ետ դառնալով պատերազմից՝
Նա չգտավ հին Երազին:

Աղջիկն արդեն հասունացել,
Է՛լ ավելի գեղեցկացել,
Բայց մի տեսակ այլ էր դարձել:
Չկար էլ հին չարաճճին
Իր ծիծաղով, կատակներով:
Ավելի էր գուցե գերող,
Ե՛վ կախարդիչ, և՛ կանացի,
Բայց նման չէր իր սիրածին:
Երազիկը մինչ այդ արդեն
Աշխատում էր իբրև կթվոր:
Արան հովիվ դարձավ հենց որ
Կամաց-կամաց, հետզհետե
Կարծես նորից վերադարձավ
Հին օրերի իր անուրջին:
Երազիկը կրկին դարձավ
Հին աղջիկը չարաճճի-
Նույն աչքերով ջինջ ու վճիտ,
Նույն ծիծաղով իր արծաթե:
Հին կասկածը նորից պատեց
Սիրտն Արայի. - Եթե, եթե…
Եվ նա կես լուրջ ու կես կատակ
Խոստովանքի խոսքեր նետեց:
Երազիկը հարմար գտավ
Միշտ ծիծաղել, կատակներով
Խուսափելու միջոց ճարել.
-Օհո՛, ումի՞ց ես այդ, հերո՛ս,
Դու սովորել սիրո ճառեր,-
Ծիծաղում էր չարաճճին
Ու թողնում էր մենակ նրան՝
Ջույգ ծամերը խաղացնելով

Իր գալարվող մեջքի վրա:
Մտածում էր ողջ օրն Արան,
Ու երբ գալիս էր կեսօրին,
Հանդիպում էր նորից նրան,
Խոսք էր գցում միտումնաբար.
-Նո՞ր հասկացա: Ես՝ մի չոբան,
Դու՝ աղջիկը նախագահի:
Ո՛չ հայրդ է գիժ, որ քեզ տա ինձ,
Եվ ո՛չ էլ դու…
-Ա՛յ քեզ կրակ,-
Երազիկն էր վրա բերում,-
Ընդամենը երկու տարի
Մնացել ես հողում օտար
Եվ մոռացել մեր աշխարհի
Օրենքները…
Եվ մինչ կտար
Արան հարմար մի պատասխան,
Աղջիկն էլի ծիծաղելով
Հեռանում էր:
Ու մեր տղան՝
Անցյալ օրվա զինվորը քաջ,
Որ թշնամու, մահվան առաջ
Այնպես սառն էր ու անշըփոթ,
Շվարել էր բոլորովին՝
Չիմանալով, թե ի՞նչ անի…
Այդպես եկավ անցավ տարին,
Իսկ ձմռանը, թարսի նման
Ուղարկեցին Երազին կուրս:
Եվ դառնալով զոոտեխնիկ՝
Գարնանը նա վերադարձավ

Էլ ավելի գեղեցկացած,
Էլ ավելի թովիչ դարձած:
Դեռ հոտերը գյուղումն էին,
Յայլաղ չէին դեռ բարձրացել:
Գոմի համար այդ օրերին
Թորգոմն էլի աղմուկ գցել,
Վիրավորել էր բոլորին:
Ոչ էլ Արան անմաս մնաց:
Ճակատ-ճակատ նա դեմ գնաց
Նախագահին…
(Դե այս արդեն
Աղջիկը չէր, որ նրա դեմ
Շփոթվի և իրեն խղճա:
Սա հայրն է հո):
-Չէ՛, ախպեր ջա՛ն,
Նախագահ ես, սակայն նայիր,
Ես պատրաստ եմ հետդ խոսել
Իբրև նախկին ճակատային,-
Մեր տղան է վրա բերում:-
Այստեղ հարցը ողջ կոլխոզի
Բարիքին է վերաբերում…
…Արան հոր հետ լավ կռվելով՝
Երեկոյան հանդիպելով
Հոր աղջկան՝
Չհամբերեց,
Բռնեց նրան ու համբուրեց:
-Տո գի՛ժ, տո խե՛նթ, ի՞նչ ես անում:
-Հորդ մուռն եմ քեզանից հանում:
-Ո՞նց թե, ա՛յ գիժ, - աղջիկն ասում,
Ասում է և հրում թեթև:

-Ո՞նց թե, այսպե՛ս, - Արան ասում
Ասում, նրան մոտ է քաշում
(Չի նկատում նա իբր թե),-
Ես քեզ համար գնամ կռիվ,
Կյանքս մատնեմ ջրին, հրին,
Մահվան առաջ կյանքս նետեմ,
Յոթը սարի –ձորի հետև
Քե՛զ երազեմ, քե՛զ կարոտեմ,
Մի կերպ պրծնեմ մահվան ձեռքից,
Գամ, որ քեզնից կարոտ առնեմ,
Իսկ դու ելնես ու ձեռք առնե՛ս…
Ո՞ւր է գրված, ո՞ր օրենքի,
Ո՞ր գլխի կամ ո՞ր կետի մեջ:
-Դու,-շշուկը Երազիկի
Խլանում է այն գետի մեջ,
Որ խշշում է նրանց կողքին,-
Դու ինքդ էիր ինձ ձեռք առնում,
Կատակներով հոգի հանում:
Կարծես զինվոր չլինեիր,
Այլ մի… այլ մի…
…Շշուկ մի տաք
Գարնանային երկնքի տակ
Երկարում է, անվերջ թվում,
Ձևը փոխում, բայց միշտ տևում՝
Ինչպես երազ…
-Դո՞ւ ես, Արա:
-Դո՞ւ ես, Երազ….
Խոպոտ մի հազ,
Ակնհայտնի միտումնավոր,
Ուշքի բերեց նրանց հազիվ:

-Դո՞ւք եք, Արա:
-Մենք ենք, քավոր,-
Մկրտիչի ծանոթ հազին
Պատասխանեց Արան հազով
Խիստ անտեղի և չսազող,
Ու մթան մեջ շառագունեց այն մանկան պես,
Որին հայրն է բռնում շաքար գողանալիս:
Շփոթվել էր Մկրտիչն էլ նույնքան կարծես.
-Հիվանդացած ոչխարներին դեղ եք տալի՞ս,
Լավ եք անում,-այլ հարմար բան չգտնելով՝
Միկիչն ասաց ու հեռացավ արագ-արագ՝
Փոքր-ինչ հեռու ճանապարհին ծիծաղելով
Իր անհաջող, խիստ անհաջող խոսքի վրա…